№ 2 Յունվարի 16 (28) **1880** Յունվարի 16 (28) № 2

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1880 Թւին

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօների հետևեալ օրերից։

Լրագրի ղիրքը և պրօգրամմին նոյն են մնում։ Մենք առանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀՆՈՒՍԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 րուբլ է, կէս տարվան 6 րուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳԻՐԱՏԱՆ մէջ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով ТИФЛИСЪ Редакція «Мшакъ.

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայի թանգութիւնը։ — Ներքին տեսութիւն։ Նամակ Ս. Պետերբուրգից։ Ներքին լուրեր։ Արտաքին տեսութիւն։ Նամակ Թիւրքիայից։—Խառն լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ՀԱՅԻ ԹԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Խօսելով Հայի թանգութեան մասին, որ սաստիկ տիրում է այժմ մեր Անդրկովկասում, առհասարակ, բայց մանաւանդ Երևանի նահանգում, հասարակութեան մեծ մասը վերաբերում է այդ թանգութիւնը գլխաւորապէս հետևեալ պատճառներին՝ ամառվայ չորութեանը, մորեխին և նոյնպէս մեր չարչիների անխիղճ վարմունքին։

Բայց Հացի թանգութեան մի պատճառ կայ, որի վրա մինչև այժմ ոչ ոք ուշադրութիւն չէ դարձրել, առաջին պիտոյքի մթերքի թանգութեան սկզբնապատճառները քննելու ժամանակ։

Անդրկովկասից դէպի հարաւ կայ մի հացատու նահանգ, որ մինչև այժմ Թիւրքիայինն էր պատկանում, իսկ այժմ միացած է Ռուսաստանին, և որտեղից միշտ մեծ քանակութեամբ հաց էր վաճառահանվում։ Դա Կարսի նահանգն է։ Ինչպէս յայտնի է Կարսի նահանգում այս երկու տարվայ մէջ, պատերազմի պատճառով վարուցանք չէ եղել, որով և քանդվել է այն հաւասարակշռութիւնը, որ պահպանվել է միշտ Կարսից դուրս եկած հացի վաճառահանութեամբ Ալէքսանդրապօլի, Թիֆլիսի և Երևանի հացի վաճառանոցներում։

Կարսի նահանգում ապրում են հայ և թուրք հողագործներ, իսկ այժմ զետեղվում են այդտեղ մեծ քանակութեամբ ռուսաց մալականներ անուանված ժիր և ընդունակ աղանդաւոր հողագործներ։ Շատերը կարծում են որ մալականների ջանքերով կրկին կը մշակվի Կարսի նահանգի հողը և շուտով այդ հողին կը վերադարձնվի նրա արդիւնաբերութեան առաջվայ ույժը։

Դորան մենք թոյլ կը տանք մեզ հետևեալը նկատել։ Ինչպէս յայտնի է Կարսի բարձրադիր նահանգի կլիման շատ խիստ և անհիւրընկալ է։ Բացի սորանից մալականների հողավարութեան սիստեման, որ կայանում է նրանում որ նրանք երկիրը վարում են ձիերով, Կարսի նահանգում իրագործելի չէ։ Կարսի դաշտավայրի հողի յատկութիւնը այնպէս է, որ հարկաւոր է վարել նրան անպատճառ մի քանի զոյգ գոմէշներով, որոնց պահելը ամենևին սովորութիւն չէ եղած և չէ կարող լինել մալականներին, որոնց համար խորթ են գրաստապահութեան և խաշնարածութեան սովորութիւնները։

Ինչպէս ապացոյց որ մալականները ամենևին ուրիշ կերպ տընտեսական կեանքի են ընդունակ, քան թէ հայերն ու թուրքերը, կարող ենք օրինակ բերել մալականների այն ազգաբնակութիւնը որ արդէն տասնեակ տարիներով ապրում է Անդրկովկասի այլ և այլ տեղերում և մինչև այժմ նրանք չը կարողացան իրանց դաշտային աշխատանքի մէջ իրանց օգնական դարձնել գոմէշը կամ եզը, այլ նրանց աշխատող կենդանին միշտ եղել է ձին և նրանք միշտ ձիավարութեամբ են պարապում։

Մենք սաստիկ երկիւղ ենք կրում, որ Կարսի նահանգի մէջ նոր գաղթած մալականները մեծ զոհեր բերելով իրանց համար խորթ կլիմայի և տնտեսական պայմանների մէջ աշխատելով, վերջը կը համոզվին որ իրանց ջանքերը ապարդիւն են։

Իսկ մինչև այդ փորձը ցոյց կը տայ իր հետևանքը, — երանի թէ մենք սխալվէինք, — աւելի և աւելի կենսական անհրաժեշտ կարիք է զգացվում խափանել այն պատճառները, որոնք մեր երկրում հետզհետէ առաջ են բերում հացի թանգութեան անմխիթար երևոյթը։

Մեր երկրի տնտեսական ընդհանուր փոխողը աչքի առջև ունենալով, համարձակվում ենք մեր կառավարութեան ուշադրութիւնը այն բանի վրա դարձնել, որ մինչև որ մալականները կընտելանան Կարսի նահանգի կլիմային և տնտեսական պայմաններին, առանց ժամանակ կորցնելու կարելի էր բնակեցնել Կարսի նահանգում երկրի բոլոր պայմաններին և յատկութիւններին զարմով սովոր մարդիկներին և իրանք տալ նրանց մշակել նոր նուաճած նահանգի հողերը վերջ գնելու համար այն անյուսելի և փոխադարձ թանգութեանը, որ աւելի և աւելի յայտնվում է գեռ, ինչպէս երևում է, պէտք է շարունակվի։

Պէտք է յիշել այստեղ որ Ալէքսանդրապօլի, Ախալցխայի և Ախալքալաքի գաւառներում կան մօտ չորս հազիւր հայաբնակ գիւղեր, որոնք այնչափ դժուարութիւններ են կրում հողերի պակասութեան պատճառով, որ ամեն տարի հողը վարելու ժամանակ արիւնահեղ կռիւներ են պատահում հողագործների և ամբողջ գիւղերի միմեանց մէջ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

19 դեկտեմբերի 1879

Դեռ մի երկու ամիս առաջ ռուս լրագիրների մէջ հրատարակված էր, որ դեկտ. 19-ին կը գումարվի Ս. Պետերբուրգ ռուս բժիշկների և բնագէտների Զ. ժողովը։ Այդ ժողովը գիտութեան տօնախմբութիւն է, նա գիտնական հանդէս է, որի տաճարի վրա նրա հետևողները—ուսումնականները կամենում էին իրենց լուման դնել, իրենց յարգանքը մատուցանել։ Լրագիրների մէջ հրատարակված պրօգրամմայից արդէն երևում էր, որ ի փառս գիտութեան տեղի ունեցող այդ տօնը ամենաշքեղ պիտի լինի։ Սկզբնական պատրաստութիւնների համար Ս. Պետերբուրգի համալսարանի խորհուրդը՝ համաձայն Բարձրագոյն թոյլտւութեան և առաջարկութեան ազգային լուսաւորութեան մինիստրի՝ իր միջից մի կարգադրիչ մասնաժողով (распорядительный комитетъ) էր ընտրել, որ բաղկացած էր հետևեալ պրօֆէսօրներից—Բէկէտով, համալսարանի րէկտօր, իբրև նախագահ մասնաժողովի, Պէտրուշէվսկի, Օվսեաննիկով, Վագնէր, Ֆամինցին, Մէնշուտկին, Խօստրանցէվ և Սեչենովի պրօֆէսօրները իբրև անդամներ։

Արդէն այս անունները բաւական էին ցոյց տալու թէ բնագէտների ժողովը որքան փառաւոր և օգտակար նիւթեր պիտի ունենայ և որովհետև Զ. ժողովի գլխաւոր նպատակը պիտի լինէր նպաստել ուսումնական և դպրոցական գործին և միջոց տալ բնագէտներին ու ուսուցիչներին միմեանց հետ մօտիկ ծանօթանալ, ուստի հասկանալի է որ ամեն մի դպրոց թէ բարձրակարգ և թէ միջնակարգ աճապարում էր մասնակցել այդ ժողովին և իր համար պարծանք էր համարում իր ներկայացուցիչը ունենալ։ Ժողովին անդամ կարող էին լինել բարձրագոյն և միջնարգ դըպրոցների ուսուցիչները և գիտնականներ կամ մասնագէտ—ուսումնականներ։ Այդ անդամներին ամենայն կերպով հեշտացրել էին Ս. Պետերբուրգ գալու միջոցները—օրինակ շատ երկաթուղիների վարչութիւններ առաջարկել էին II և I կարգերով ձրիաբար հասցնել Ս. Պետերբուրգ, շատ անդամների համար պատրաստել էին ձրի բնակարաններ ամենալաւ հիւրանոցներում։ Արդէն դեկտ. 14-ից սկսած Ռուսաստանի ղանազան հեռաւոր կողմերից սկսեցին գումարվել Ս. Պետերբուրգ բազմաթիւ պրօֆէսօրներ և ուսուցիչներ ու անուանի բժիշկներ և ուսումնականներ։ Ժողովին ներկայ գտնուելու մասին ցանկութիւն էին յայտնել և շատ լրագիրներ, ուստի և ուղարկել էին իրենց թղթակիցներին։ Որովհետև «Մշակի» խմբագրութեան կողմից ինձ յանձնված էր ներկայ գտնուել ժողովին իբրև այդ լրագրի թղթակից, ուստի ես Մոսկվայից ճանապարհ ընկայ Ս. Պետերբուրգ և ամսի 17-ին ներկայացնելով բիւրօյին խմբագրութեան թուղթը, ես ստացայ պրօֆէսօր Խօստրանցէվից—մասնաժողովի սեկրետարից ժողովի հաստատուած կանոնադրութիւնը և կարմիր բեհեզից գործած սատղանման նշան։ Ամեն մի անդամ ստանում էր նոյնպէս այդպիսի մի նշան և կանոնադրութիւնը և դրանց զօրութեամբ թըղ-

թակցի կամ անդամի առաջ պիտի բացվէին ոչ թէ միայն ժողովի, այլ և Ս. Պետերբուրգի նշանաւոր տեղերի, մուզէների և թանգարանների դռները։

Դեկտ. 19-ին երեկոյեան ժամը 8-ին Դէմուտ հիւրանոցի ընդարձակ սրահներում տեղի ունեցաւ ժողովի սկզբնական կոնֆէրէնցիան։ Երբ անդամների տպագրած անուանց ցուցակը բաժանեցին, տեսայ որ նրանց թիւը հասնում էր մինչի 1200։ Սրահները ծփում էին ուսումնական աշխարհի ալիքներով, շատ ընկերներ գրկում, ողջունում էին միմեանց երկար բաժանումից յետոյ։ Ճշմարիտ այդ գիտնական տօնախմբութիւնը խիստ ուրախացուցիչ էր։ Սակայն այդ ընդհանուր ուրախութեան մէջ, մի բան ինձ տխրեցնում էր. 1200 անձանց թւում ես չը գտայ ոչ մի հայ ուսումնարանի ներկայացուցիչ, ոչ մի հայ ուսուցիչ չէր բարեհաճել գիտութիւնը յարգել։ Ռուս, գերմանցի, յոյն, ֆինլանդացի, ֆրանսիացի եկել էին գիտութեան տաճարին պատարագ մատուցանել, իսկ հայը—հայ ազգը բացակայ էր այդ տաճարից։ Ես մինչև անդամ մասնաւոր կերպով յայտնել և խնդրել էի Ներս. դպրոցին աճապարելու մի ուսուցիչ ուղարկելու, իբրև իրեն ներկայացուցիչ, բայց իմ առաջարկութիւնս մնացել էր «ձայն բարբառոյ յանապատի»....

Այսօր ժամը 1-ին տեղի կունենայ ժողովի առաջին ընդհանուր նիստը։ Ես աճապարում եմ ներկայ գտնուելու։

Հ. Առաքելեանց.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ռուսաց «Обзоръ» լրագիրը պ. Նիկոլաձէի խմբագրութեամբ ներկայ տարուց սկսեց նորից հրատարակվել Թիֆլիսում։

—

Շնորհակալութեամբ ստացանք Թիֆլիսի թարգմանական ընկերութեան ձեռքով հրատարակված Գամառ-Քաթիպայի «Մանկական երգեր։» Գրքոյկը պարունակում է տասն և ութ երգեր, իսկ չորս երգերի համար յարմարեցրած են նոտերը։

—

Յունվարի 4-ին պ. Ա. Երիցեան կարդաց Թիֆլիսի գործակատարների կլուբում մի հայերէն դասախօսութիւն «Հայոց լեզուի և դրոց պատմական ծագումը» վերնագրով։ Պ. Երիցեանը աւելի գեղեցիկ և ազատ է խօսում հայերէն քան թէ ռուսերէն լեզուով։ Դասախօսութիւնը հասկանալի և ժողովրդական էր։ Պէտք է անկողմնապահութեամբ խոստովանել որ պարոնը, թէև ոչ համալսարանական և ոչ էլ մինչև անդամ կատարեալ գիմնազիական ուսում ունի, աւելի աշխատասէր է և մինչև անդամ աւելի հմտութիւններ ունի քան թէ մեր համալսարանական երիտասարդութիւնը։ Երիցեան հաղորդեց մեզ շատ հետաքրքիր տեղեկութիւններ Ասիայի այլ և այլ տեղերում գտնված բևեռաձև (սեպաձև) տառերի և հնագիտական այլ նոր գիւտերի մասին։ Իր խօսքերը նա բացատրում էր տախտակների վրա նկարած գրերի զանազան ձևերով։ Աւելորդ չենք համարում յիշել այստեղ դասախօսութեան ժամանակում մի բարձր ուսում ստացածի, բժշկապետ Ա. Բաբայեանի անտեղի վարմունքը։ Պ. դոկտորը ընդմիջեց դասախօսին, տեղից վեր կենալով և նրան հարցեր առաջարկելով։ Ինչ կը լինէր եթէ դասախօսութեան ժամանակ լսողները մին միւսի ետևից տեղից վեր կենալով, դասախօսին զանազան հարցեր առաջարկէին.... Դասախօսը այդպիսով երբէք չէր կարող վերջացնել իր դասախօսութիւնը։ Կամ գուցէ պ. Բաբայեան կարծում է որ ինքն միայն ունի այդ արտօնութիւնը։ Բայց դահլիճի մէջ կային և գուցէ շատ ուրիշներ, որոնք նոյնքան և աւելի են հասկանում քան թէ դօկտոր Բաբայեան, կամ որոնք այս և այն բան չը հասկացան,—բայց այնքան համեստ էին, որ չը համարձակվեցան ոչ դասախօսին ոչ էլ հասարակութեանը ձանձրացնել։ Հարկաւոր է առհասարակ բարձր ուսում ստացածներին, և մանաւանդ բժիշկ Բաբայեանցին փոքր ինչ համեստութիւն սովորել։ Կան մեզ մօտ պարոններ, որոնք յայտնի չէ թէ ինչի միշտ իրանց անձը բացառութիւն են համարում հասարակութեան մէջ։

—

Ստացանք ՄԱՆԳԼԻՍԻ հայ վաճառականներից 25 ր. 77 կ. յօգուտ «Արարատեան» ընկերութեան։ Պ. պ. վաճառականները հացկերոյթի ժամանակ երաժշտութեան համար 25 ր. էին հաւաքել և յետոյ վճռել էին այդ փողերը «Արարատեան» ընկերութեանը նուիրել։

—

Ստացանք ԴԵՐԲԵՆԴԻՑ պ. Գասպար Ամիրեանցից 10 ռուբլ յօգուտ «Արարատեան» ընկերութեան։

—

Կիրակի, յունվարի 13-ին ԹԻՖԼԻՍԻ Կրուժոկում նշանաւոր ռուս երգիչ պ. Սլավիանսկի իր խօրով, որ բաղկացած է մօտ 30 մարդիկներից, տուեց մի կոնցէրտ։ Թիֆլիսցիները երևի յիշում են պ. Սլավիանսկու խօրը, որ մի քանի տարի սրանից առաջ Թիֆլիսումն էր և սաստիկ զբաւում էր մեր հասարակութիւնը։ Պ. Սլավիանսկի տուել է իր կոնցէրտները ոչ թէ միայն Ռուսաստանում և ամբողջ Եւրոպայում, բայց և Ամերիկայում։

—

Խնդրում ենք մեր անցեալ տարվայ բաժանորդներին, որոնք դեռ մինչև այժմ չեն վճարել, ուղարկել խմբագրութեանը «Մշակի» անցեալ տարվայ վճարը։

—

Ներկայ տարվայ «Մշակի» բաժանորդներին յայտնում ենք, որ «Մշակի» բաժանորդագիրը ուղարկելու ժամանակ այս տարի հարկաւորութիւն չունեն փոստի մարկաներ ուղարկել ապահովագրի համար։

—

Այս օրերս ստացանք ԵՐԵՒԱՆԻ բաղմաթիւ հայերի կողմից մի հեռագիր, որ շնորհաւորում է «Մշակին» իր գոյութեան իններորդ շրջան մտնելը և ցանկանում է մեր թերթին աջողութիւն։

—

ԵՐԵՒԱՆԻՑ յունվարի 8-ից մեզ հեռագրում են հետևեալը։ «Երէկ ներկայացրին այստեղ «Բանդած Օջախ» պիէսան։ Դահլիճը լի էր. գեղեցիկ խաղը հիացրեց հասարակութեանը։ Շատերը շնորհակալութիւն են յայտնում Սունդուկեանցին։ Ափսոս որ «Մշակի» ձայնը մեր կուսակցութիւնների միանալու մասին դեռ մնում է ձայն բարբառոյ յանապատի։»

—

«Кавказъ» լրագրում կարդում ենք որ 31 դեկտեմբերի Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ մեծ թատրոնը սկսեց այրվել։ Հրդեհի հետևանքի մասին դեռ ոչինչ յայտնի չէ։ Զարմանալի է որ այդ տեսակ երևոյթների մասին «Միջազգային հեռագրական ընկերութիւնը» ոչինչ չէ հաղորդում, իսկ հաղորդում է Աւգանիստանի կամ զուլուսների մօտ պատահած այս կամ այն ճակատամարտի մասին։

—

Այս ամեռը ԹԻՖԼԻՍՈՒՄ, և երևում է ամբողջ Անդրկովկասում, անսովոր մի ամեռ է։ Վաղուց չեղած ցրտեր էր անում ամեն տեղ։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ պ. Եակուշկին կատարելագործել է շարելու մեքենան և շուտով ներկայացնելու է նրան տեխնիկական ռուսաց հանդիսին։ Այդ մեքենան անհամեմատ աւելի շուտ է շարում, քան թէ կարող է շարել ամենավարժ դրաշարը։ Մանաւանդ մեքենան մեծ նշանակութիւն կունենայ ամենօրեայ լրագիրների համար։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են որ այդտեղ հասարակութիւնը համակրելով «Մշակի» անցեալ տարվայ առաջնորդող յօդուածներին արուեստագործական օրիորդաց դպրոցների մասին, մտադիր է փոր ժողովել և հիմնել մի այնպիսի իգական դպրոց, որտեղ գործնական ուղղութիւնը ամենազօրեղ կերպով կը տիրապետէ թէօրիական ուղղութեան վրա։ Նամակագիրը յոյս է յայտնում որ այդ դպրոցի բացվելուց յետոյ, Ախալցխայի օրինակին կը հետևեն և միւս հայաբնակ քաղաքներ։

—

Մեզ հաղորդում են և հետևեալը. «ԱԽԱԼՑԽԱՑԻ քաղաքային Դուման երեք հազար բուբլ է յանձնել մի յանձնաժողովի, որ ալիւր առնվի և թանգութեան պատճառով ծախվի աղքատներին ամենավերջին գնով, պահելով ևս բազարի գինը նոյնը, առանց բարձրացնելու։»

—

«Новое Время» լրագիրը հաղորդում է որ ռուս նշանաւոր նկարիչ պ. Վերեշչագին մեծ աջողութիւն ունեցաւ Փարիզում, որտեղ նա բերեց այժմ իր նկարչութիւնները։ Պարոնի նկարչութիւնների հանդէսը գտնվում է Վօնէյ փողոցի մի տան մէջ։ Գրեթէ ամբողջ Փարիզը գնում է տեսնելու Վերեշչագինի նկարչութիւնները և շատերը ասում են որ այդ արհեստագէտի ստեղծուածները մի նոր յայտնութիւն են նկարչական աշխարհի մէջ։ Ֆրանսիացի ամենաերևելի նկարիչներ, Մէյսոնիէ և Ժերոմ շնորհաւորեցին Վերեշչագինին։

—

Վաղը յունվարի 17-ին, հինգշաբթի օրը պ. Սլավիանսկի իր խօրով տալու է մի կոնցէրտ Արծրունու թատրոնում։ Թատրոնում մի քանի փոփոխութիւններ են արած, այնպէս որ այս անդամ յոյս կայ թէ ցուրտ չի լինի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 24 դեկտեմ. 79 թ.

Ազգ. ժողովը դեկտեմ. 14-ին գարձեալ ապարդիւն նիստ մ'ունեցաւ, ընդարձակ օրակարգ մը կար և Տիգրանակերտի խնդիրն առաջին և գլխաւոր հարցն էր։ Անկարգ անկանոն նիստ մը, յորում գոռում գոչում կը տիրեր։ Այս խնդրոյ մէջ երեսփոխանք կուսակցութեանց բաժնուած են և կը տեսնուէր, թէ աւելի անձնական նկատումներ ի նկատի ունենալով կը վիճէին, քան ազգի շահը։

Վարչութեան յանձնուեցաւ Տիգրանակերտի ժողովրդի շնորհաւորանքն այս խնդիրն կարգադրել և զի դժուար է Փիլիպպոս եպիսկոպոսը խրկել Տիգրանակերտ, առ այժմ Եդիմիոյ Խորէն եպիսկոպոսը Տիգրանակերտ պիտի երթայ, Թրօխթը և Պէյքր հոն պիտի լինեն, եպիսկոպոսի մը ներկայութիւնը պէտք է։ Տիգրանակերտ կարևոր գաւառ մ'է և հոն աւելի արթուն մէկը պէտք է. Խորէն եպիսկոպոս բարի և ազգասէր ծերուկ մ'է. բայց վախկոտ լինելու չափ խոհեմ է, վարպետութիւն ըսուած բանը մտքէն չանցնիր։ Ինչ և է, մեզ համար ցաւալի վիճակ մ'է Տիգրանակերտի դրութիւնը և մեզ տխուր գաղափար մը կուտայ Կ. Պոլսոյ այն անձանց համար որք, կը կարծեն թէ Հայաստանի փրկիչներն լինելու կոչուած են։ Այս միջոցիս Հայաստանի և Կիլիկիոյ հարստահարութիւններն կը բազմապատկվին և աւելի սիստեմատիքական կերպարանք մը կառնուն։ Կարմիր տեարին գ. մասն ալ հրատարակվեցաւ և ձեզ խրկեցինք երկուշաբաթ առաջ. հոն ակներև կը տեսնուի թէ ինչ է հայոց վիճակը։ Տեարը կը պարունակէ Վ.ահան վարդապետի տեղեկագիրն առ Թրօխթը, միւս կողմէ մեր թերթերն չարունակէ Վ.ահան վարդապետի տեղեկագիրն առ Թրօխթը, միւս կողմէ մեր թերթերն չարունակ լեռն այնպիսի տեղեկագրերով որ սոսկում կը պատճառեն։ Մէկ քանի հատերն յիշել աւելորդ չը թուեր։

Զարսանճակցի Կարապետ անուն երեսուն տարեկան անձ մը անտառը փայտ կտրելու ատեն իսակ պէյի մարդերն զնա զարկած են, մարմինը կառավարութեան առջև կը բերեն, ցոյց կուտան և կը թաղեն. խեղճը բազմաթիւ ընտանիք մը թողուցած է։ Իսկ սպանիչները ինչ հոգ։ Իսակ պէյ սովորութիւն ունի եղեր տարին առ նուազն մէկ հայ սպանել. հետևաբար ըրածը ոճիր մը չէ այլ պարզ սովորութեան մը անմեղ գործադրութիւնը։ Պէտք է ըսել որ այդ կողմի մեր ժողովուրդն ալ բոլորովին թուլամտի անձինք են։ Հայաստանի ճանապարհորդներն կը պատմեն թէ ժողովրդի կողմէ երբ սակաւ ինչ արիութեան նշաններ տեսնուին, քիւրդք և պէյերն ինքզինքնին չուտով կը չափաւորեն, օրինակի համար, Բաբերդէն «Մասիսի» կը գրեն թէ 30-ի չափ մահմէտականք զանազան գիւղերէ ժողվելով Օձտեղ գիւղի վրա կը յարձակին, կը պաշարեն քահանա Գէորգի տունը. Գէորգ զինու զօրութեամբ կը դիմադրէ իւր տունը գտնուող Հաճիս փաշա անուն անձն ալ կը միանայ և դրացիք ևս կը հասնեն, ու կանոնաւոր պատերազմ տեղի կունենայ. տաճիկներն քիչ մը բան առնելով կը փախչին կերթան։ Եթէ ամենքն իրենց տուներն քաշուէին, անշուշտ ամբողջ գիւղացիներն կը կողոպտուէին։ Բայց պէտք չէ մոռնալ թէ երբ հայք իրենց վրա յարձակողաց դիմադրեն և ինքզինքնին պաշտպանելու համար յարձակողներէն սպաննեն, պարտաւոր են արեան գինն վճարել, որ շատ անգամ մեծ գումար կը լինի։

Սեբաստիայէն կը գրեն թէ Ապէտին փաշայի Մակեդոնիա աքսորելիք 10—15 քիւրդ դերիպէյներն երկու ամսէ ի վեր է որ հոս են. քաղաքիս մէջ խիստ երջանիկ և անդորր մի կենցաղ ունեն, և ազատօրէն կը շրջին. թերևս այսպիսի մը բարօրութիւն իրենց երկրին մէջ վայելած չէին։

Տեսանենք ապագայ կապոյտ տետրակի մէջ այս հարցերու վերաբերեալ ինչ տեղեկութիւններ պիտի գտնենք։ Վերջի կապոյտ տետրի մէջ թէպէտ մի քանի նամակներ կան հայոց վերաբերեալ, բայց ստոյգ է որ 250 է աւելի գրութիւններ յանձնուած են Պաորիարքարանէ առ Անգղիական դեսպանատունն։ Թրօխթրի նոր տեղեկութեանցը կը սպասեմք։ Հայաստանի ամեն կողմը կը ճաճապարհորդէ, հայերէ սիրալիր ընդունելութիւն կը գտնէ և բարեկարգութեանց համար նոցա ցոյց տուած ծրագիրներն կընդունի։ Կերևի թէ ամենէն աւելի Ակնեցիներու ծրագիրէն գոհ մնացեր է։ Սրուանձտեանց վարդապետ և ակնեցիք շատ մեծ բաներ չեն պահանջեր, բայց ինչ որ կուզեն, կարևոր են։ Եօթը հատ առաջարկութիւն կանեն, հայ պաշտօնեայներու ընտրութիւնը կը խնդրեն. քրիստոնէից վկայութիւնը ընդունուել, հասարակաց շինութեան և կրթութեան հոգ տանել. Թրօխթրը շատ գոհ կը մնայ, և յայտնի կասէ թէ քաղաքական կեանքի հայերն վարժ չեն դեռ, պէտք է կրթուին։ Ուրիշ տեղ մը Թրօխթրը և Գարեգին վարդապետ սեղանակից կը լինեն։ Սեղանի վրայ զանազան բաժակներ առաջարկուած ատեն Սրուանձտեանց իւր բաժակը լեցնելով կը հարցնէ Թրօխթրի թէ «հանճարի խմենք թէ զօրութեան»,—«հանճարի» պարպենք բաժակիս, կրսէ անդրդիացին և կը պարպեն։ Մենք Հայաստանի ապագան հանճարէ յուսացած ժամանակիս թիւրքերն ալ իրենց քաղաքական հանճարն ի գործ կը դնեն քրիստոնէից պատրիարքներու վայելած քաղաքական իրաւասութիւններն նուազեցնելու համար. կալուածական դրերու մասին արդէն գրած ենք թէ Բ. Դուռը կը պահանջէ որ պատրիարքաց կնիքներու առընթեր դնուին խամներու կնիքներն ևս։ Բ. Դուռնէն նոր ծանուցագիր մը եկաւ որոյ ազդու կերպով և արդար փաստերով պատասխանեց Պատրիարքարանը, պահանջելով միանգամայն որ այսպիսի փափուկ ատեններ հայ ազգին մի քանի իրաւանց չը դպին։

Յունաց Պատրիարքարանն, որ լուսեայն ընդունած էր Բ. Դրան առաջարկը մեր ընթացքը տեսնելով սթափեցաւ, մանաւանդ որ Կ. Պոլսոյ յոյն ամենէն նշանաւոր թերթը «Նէօլոյոս» Ներսէս պատրիարքի և յունաց պատրիարքի բաղաստութիւնը ընելով առաջնոյն գովեստներ կը կարդար և փափագ կը յայտնէր որ իրենց գլուխն ալ նմա հեաեի։ Այժմ երկու պատրիարքներն միացան այս խնդրոյ մէջ. կաթոլիկ հայոց կողմէ ևս վարդապետ մը եկաւ ի Պատրիարքարան տեսակցելու համար այս հարցի մասին. հրեաներն ալ գէշ օրինակ առին։ Բ. Դուռը կատղած է հայոց դէմ, վասն զի ամեն անդամ որ Բ. Դրան և քրիստոնէից մէջ իրաւասութեան խնդիր մը կը ծագի, հայոց Պատրիարքարանն է որ գլուխ կանգնի ընդդիմադրութեան։ Թիւրք թերթերն ալ կառավարութեան դաղափարաց մասնակից են և չարունակ հայ թերթերու վրայ կը յարձակեն։ Թերճեման հայերէն թերթը Հայաստանի հարստահարութիւններն շատ կծու կերպով կը հրատարակէր, Վագթ, թրքաց ամենէն կարևոր թերթը զնա իբր խռովարար ցոյց տուաւ. Թերճեման անմիջապէս բողոքեց և պահանջեց որ Վագթ ապացուցանէ իւր խռովարար լինելն, ապա թէ ոչ իբր զրպարտիչ պատիժ ընդունի. Թերճեման կողմէ երեք նշանաւոր հայ փաստաբաններ կարդունցան. իսկ Վագթ կարծեմք դեռ փաստաբան չը նշանակեց. և կարծեմք ըրժուարութիւն ալ պիտի կրէ նշանակելու, վասն զի հաւանական չէ որ հայ փաստաբան մը կամենայ Վագթի պաշտպանութիւնը ընել, զի ազգային խնդիր է. թիւրք փաստաբան (նշանաւոր) հազուագիւտ է, թերևս չը գտնուիր, իսկ եւրոպացիներն այս դատարաններու առջև գործ չունեն. յոյներն ոչ լեզուն լաւ գիտեն, ոչ բան մը կը հասկնան, տեսնենք ինչ կը լինի. շատ հետաքրքրական դատաստան պիտի լինի, եթէ տեղի ունենայ. բայց չեմք կարծեր որ տեղի ունենայ, այլ յետաձգուելով կը մոռցուի. վասն զի եթէ դատաստանը Թերճեմանը վատակի, այնուհետև ալ ոմ պիտի կարենայ չափ դնել հայ թերթերու լեզուին, որ արդէն շատ և շատ կծու է, և միանգամայն Վագթի հետ կառավարութիւնը պիտի դատապարտուի, որ այսպիսի սոսկալի հարստահարութիւններ կը տեսնէ և ձայն չը հաներ կամ կը քաջալարէ իսկ։ Իսկ եթէ Վագթ վատակի դատաստանը այնուհետև թրքաց հասարակաց կարծիքը պիտի դատապարտէ զկառավարութիւնը որ խռովարար թերթերու հրատարակութիւնը թոյլ կուտայ. ձգնեք որ գրեթէ անհնար է Թերճեմանի անիրաւ լինելն հաստատել։ Իբր խռովարար ձերբակալուած Ֆրնուզի վանահայր Նիկողոս եպիսկոպոս ի Զէյթուն գնաց. Արքին վարժապետը դեռ հոս է։ Զէյթունի խնդիրն գոհացուցիչ կերպով կարգադրուած է, բայց դեռ վէճի ենթակայ մի քանի կէտ կայ. ոչխարներէ առնուելիք տուրքը, հանքերէ առնուելիք տուրքը, և կառավարչին քրիստոնեայ կամ թիւրք լինելն. այս վերջի կէտին մէջ կառավարութիւնը նորէն կուզէ իւր խոստումը դրժել, բայց հաւանական չէ որ յաջողի։

Նոր տարուայ առթիւ պ. Զերազ և Օրմանեան վարդապետ դեսպանաց շնորհաւորութեան գացին սրբազանի կողմէ, բացի Ռուսիայի դեսպանատունէն, զի նոքա ըստ հին ոճոյ կը տօնեն։

Այս օրերս վախճանեցաւ ծերունին Մօլթման, որ բաւական համբաւ կը վայելէր քաղաքական և հնագիտական շրջանակներու մէջ. հայ ազգի պատմութեան սիրող մ'էր. Վանայ սեպագիր գրերն լուծելու հետամուտ եղած էր և գերմանական թերթերու մէջ մեղ նպաստաւոր յօդուածներ հրատարակած է. Թաղման հանդիսին բազմութեան մեծագոյն մասը հայոց կողմանէ էր, Փիլիպպոս սրբազան պատրիարքը կը ներկայացնէր և պ. Զերազ յանուն հայ երիտասարդութեան ֆրանսերէն դամբանական մը խօսեցաւ. զոր հրատարակեց Stamboul.

Հայկակ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկայի Ինդիանա նահանգում քաղաքական ամուսնութեան հանդէսը վերին աստիճանի հասարակ է։ Դատաւորը հարցնում է օրիորդին. «Ցանկանում էք սրան ձեզ մարդացու»,— «Այո» պատասխանում է նորահարսը։ «Իսկ դուք, ցանկանում էք սորան կին ուզել» հարցնում է դատաւորը փեսացուին։ «Այո» պատասխանում է այդ վերջինը։ «Ուրեմն դուք պսակված էք, վճարեցէք օրէնքով պահանջվող 2 դոլար և կարող էք գնալ։» Սրանով վերջանում է ամբողջ հանդէսը։

***

Հարաւային Գերմանիայի մի քանի տեղերում ջրերը մեծանալով, աստիկ հեղեղ են պատճառել։ Երկաթուղու մի քանի գծերում գնացքները դադարել են իրանց երթևեկութիւնը։

***

Ինչպէս հաղորդում են Վիէննայի լրագիրները, Աւստրիայի մայրաքաղաքում շուտով հեղեղ է սպասվում Դունայի մէջ ջրերի անչափ բարձրանալու պատճառով։ Բավարիայի սահմանից Լինցի ուղղութեամբ անգամի քանակութեամբ սառուց է լողում Դունայի վրա։

***

Հիւսիսային Ամերիկայի Օհիո նահանգում ամուսնական ապահարզանները (ամուսինների միմեանցից բաժանվելը) շատ բազմաթիւ են լինում։ Հաշված է որ 17 պսակների վրա 1 ապահարզան է լինում։ Օրինակի համար 1878 թվին Օհիո նահանգում կատարվել են 25,796 պսակներ, իսկ նոյն տարվայ ընթացքում 3,371 պրոցէսներ են սկսվել ապահարզանի մասին։ Նրանցից 1432 զոյգեր բաժանվելու և նորից ամուսնական կապեր կապելու իրաւունք են ստացել։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 դեկտեմբերի։ Տաշկենտից հեռագրում են «Русскій Инвалидъ» լրագրին, որ Սամարկանդում բնակվող Աբդուրահման, Սերվեր և Իսխան հօրեղբօրորդի խանները թողնելով իրանց ընտանիքը Սամարկանդում, փախել են արտասահման։

ԻՐԿՈՒՏՍԿ, 27 դեկտեմբերի։ «Сибирь» լրագիրը զիներալ նահանգապետի կարգադրութեամբ արգելված է։

ՓԱՐԻԶ, 30 դեկտեմբերի (11 յունվարի։) «Journal Officiel» լրագրում հրատարակված է, որ Դօբօ զիներալը նշանակված է շտաբի զբաղխաւոր, պատերազմական մինիստր Տիբօդէն նշանակված է հետևակ զօրքի գլխաւոր, Սամզա զիներալը թնդանօթաձիգ զօրքի, Վիլնուազի զիներալը—երկրաչափական զօրքի, Լուտղիլիէն զիներալը—հեծելազօրի գլխաւոր և Պանաֆիէնօմ զիներալը-հաշուադիտական մասնի գլխաւոր։

ԿԱՆՆ, 29 դեկտեմբերի (10 յունվարի։) Կայսրուհին այսօր բաւականի զոհացուցիչ կերպով անցկացրեց, հազը չափաւոր էր։ գիշերվայ առաջին մասը շատ լաւ քնեց. քրտինքը պակասեցաւ. Ջերմութեան աստիճանը երեկոյեան 38 էր, իսկ երակի զարկը 98. այսօր Ջերմութեան աստիճանը 37,8 է, իսկ երակի զարկը 100։

ԿԱՆՆ, 30 դեկտեմբերի (11 յունվարի։) Կայսրուհին օրը բաւականացուցիչ կերպով անցկացրեց. հազը ցերեկով չափաւոր էր, իսկ գիշերը սովորաբար աւելի սաստիկ, ախորժակով ճաշեց. քրտինքը բաւականին պակասեցաւ. Ջերմութեան աստիճանը երեկոյեան 37,9 էր, իսկ երակի զարկը 98. առաւօտը Ջերմութեան աստիճանը 37,8 էր, իսկ երակի զարկը 100։ Ստորագրեցին Աշչէվսկի և Բօտկին բժշկապետները։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 դեկտեմբերի։ Հէրնզրօս, Սալոմոն, Պոչէնով սենատորներին, բանակի կառավարիչ Լամանսկիին և Ծովապետ Վլադիմիրովին, շնորհված է Ալէքսանդր Նէվսկիի շքանշանը։ Գեդդա, Զէմատուրով Մէդէմ և Ֆոնֆակ սենատորներին, Նորդմոն և Անդրէեվ Ծովապետներին, գլխաւոր վարչութեան մամուլի մասնի անդամ Լազարէվսկիին և Վէսելովին, Վէսելավսկի և Դարնուակադէմիկներին, և շինութիւնների տեխնիկական մասնաժողովի նախագահ Բոդանովսկիին շնորհված է Սպիտակ արծուի շքանշանը։ Պետական խորհրդարանի անդամ Կօրնիլով, Օբոլէնսկի և Մանուրով ստացան դէյստվիտելնիյ ստացկիյ սովէտնիկի ատաղձը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 յունվարի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է 1880 թուի բիւդժէտի եկամուտը հաշված է 666,452,434, ռ., ծախսը 666,256,500 ռուբլ, իսկ եկամուտի աւելացածը է 195,934 ռուբլ.

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 դեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 92 ռ. 50 կ., երկրորդ 92 ռ. 37 կ., երրորդ 92 ռ, 75 կ., չորրորդ 92 ռ. 55 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 315,5 կ., երկրորդ 227 ռ. 5 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակն արժէ 90 ռ. 37 կ., երկրորդ 90 ռ. 25 կ.։ Ռակի 7 ռ. 85 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 25 պէնս, ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա 213 մարկ, 50 պֆ. Փարիզի վրա 264 ֆրանկ 25 սանտիմ։ Տրամադրութիւնն ամուր է։

ԿԱՆՆ, 1/12 յունվարի։ Երէկ ամբողջ օրուայ ընթացքում Կայսրուհին իրան թոյլ էր զգում, նեղանում էր սրտի բաբախմունքից, և երեկոյեան զանգատվում էր, որ անցած պլեվրիտայի տեղը աջ կողքը ցաւում է. հազը աւելի քիչ էր, գիշերը գրեթէ չը քրտնեց. Ջերմութեան աստիճանը երեկոյեան 38 էր, իսկ երակի զարկը 110. այսօր առաւօտ Ջերմութեան աստիճանը 38, 6 է, իսկ երակի զարկը 110։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 յունվարի։ Հէլսինգֆօրսում «Սուրբի Ընտանիք» անունով մի ընկերութեան մասնաժողովի անդամները փորձել են սպանել պատսար Լինդվիստին. եղեռնագործները կալանաւորված են։

ՓԱՐԻԶ, 2|14 յունվարի։ Պատգամաւորների ժողովը ձայների բազմութեամբ Գամբէտտային նախագահ ընտրեց։

ՅԵՏԻՆԻԷ, 2|15 յունվարի։ Նիկոդայոս իշխանը հրամայեց 5,000 չէրնոգորցիներին դուրս գնալ Անդրէեվից։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յունվարի։ Երէկ բժշկապետ Շ. և կոմս Կ. մենամարտութիւն արին. բժշկապետի կուրծքը վիրաւորվեցաւ. մասնակցողները կալանաւորած են։

ՆՈՎՈՉԷՐԿԱՍԿ, 2 յունվարի։ Նովոչէրկասկի նահանգական դատարանի մէջ ծախսած 70,000 ռուբլի գործը կը քննվի յունվարի 15-ին Օտրօժսկի դատարանում։ Նովոչէրկասկի դատարանի ամբողջ կազմակերպութիւնը կանչված է իբրև վկայ։ Մեծ քանակութեամբ ձիւն է եկել. սաստիկ ցրտեր են։

ԿԱՆՆ, 2|14 յունվարի։ Երէկ ամբողջ օրվայ ընթացքում Կայսրուհին իրան աւելի թոյլ էր զգում, փոքր ինչ հազում էր, բաւականին լաւ ճաշեց, լաւ քնեց, քիչ քրտնեց, աջ կողքի ցաւը և սրտի բաբախումը չեն անհանդստացնում։ երէկ և այսօր Ջերմութեան աստիճանը 37, 1 է, իսկ երակի զարկը 116։ «Русскій Инвалидъ» լրագիրը, հերքելով զերմանական և աւստրիական լրագիրների այն լուրերը, որ իբր Ռուսաստանն ահրևմտեան սահմաններում ահագին զինուորական պատրաստութիւններ է տեսնում, ասում է, որ բոլոր այդ լուրերը սուտ են. կառավարութեան զործ դրած միջոցները ուղղակի դիմում են խաղաղասիրական նպատակներին։ Ռուսաց բանակի թիւը անդադար փոքրացնում են. անցեալ դեկտեմբերին բանակը խաղաղ ժամանակի սովորական շտատից էլ 36,000 մարդով փոքրացաւ։

ՋԵԼԱԼԱԲԱԴ, 4|16 յունվարի։ Հիւսիսային կողմից Կաբուլ գետն անցնող Մամունդների հրասակները մեծ կորուստով յետ մղվեցան. նրանք նորից անցան գետի միւս ափը։ Այժմ մամունդները ժողովուել են Լանդօ-Ժիլկելի մէջ։ Գիներալ Դօրեն դուրս եկաւ Լունդիկատալից և նրա շրջականներում յարձակվեցաւ Մամունդների վրա։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 յունվարի։ «Русскій Инвалидъ» լրագիրը հաղորդում է, որ զիներալ Գան նշանակված է Զէսլինսկի զինուորական աղքատանոցի տեսուչ։

ԼՕՆԴՕՆ, 5|17 յունվարի։ Բօբէրտ հեռագրում է։ «Ես թողեցի Կաբուլի զինուորական նահանգապետութեան պաշտօնը, և Կաբուլի կառավարելը յանձնեցի Վալի-Մահմեդ խանին։»

ՓԱՐԻԶ, 5|17 յունվարի։ Մինիստրութեան յայտարարութեան մէջ ասված է, որ ներկա կաբինէտը նախորդ կաբինէտի նման կը շարունակի խելացի և զգոյշ քաղաքականութեան հետևել, բացի այս, նա կը պահանջի, որ Սենատը քուէարկի տպագրութեան օրէնքները, ժողովների ազատութիւնը, և կը հետևի հասարակական աշխատանքների ծրագրին։ Մինիստրութիւնը կը պահանջի, որ ըշտապեն քննել զինուորական օրէնքները. կաբինէտը ցանկանում է Ֆրանսիային խաղաղութիւն տալ. յայտարարութիւնը վերջանում է հետևեալ խօսքերով. «մենք ամենայն հաստատամտութեամբ կաշխատենք զործել յօգուտ խաղաղութեան, մենք չենք կամենում արտաքսել Ֆրանսիացիներին, այլ մենք կամենում ենք վերադարձնել նրանց բոլորին։»

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 յունվարի։ «Правит Вѣстникъ» լրագիրը հաղորդում է հետևեալը. Կանն, 3 յունվարի։ Կայսրուհին երէկուայ օրը բաւականին զոհացուցիչ կերպով անցկացրեց, հազը քիչ էր, սրտի բաբախումից չէր նեղանում, գիշերը հանգիստ անցաւ, քրտինքը չափաւոր էր, Ջերմութեան աստիճանը երէկ երեկոյեան 37,2 էր իսկ երակի զարկը 100, այսօր առաւօտ Ջերմութեան աստիճանը 37,8 էր, իսկ երակի զարկը 100։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 յունվարի։ Նիժէգորոդսկի նահանգապետ կոմս Կուտայսով, իր հիւանդութեան առիթով տուած խնդրի համաձայն, հրաժարեցրած է պաշտօնից։

ՎԻԵՆՆԱ, 6|18 յունվարի։ Պէշտի անցքերը ԹուլայցրինՏիսայի մինիստրութեան կուսակցութիւնը, այժմ պահանջում են, որ կաբինէտի կազմակերպութեան մէջ փոփոխութիւններ մտցնվին, նրան այժմ խորհուրդ են տալի յանձնել նախագահ—մինիստրի պաշտօնը Անդրաշիին, իսկ իրան Տիսայի խորհուրդ են տալի վերցնել ներքին զործերի մինիստրութեան պորտֆէյլը. ասում են, որ Տիսա համաձայնեց. այս օրերս նա հրաժարականի խնդիրը կը ներկայացնի։ Զանազան շրջաններում խօսում են, որ Ցիսլէտանեան կաբինէտում շուտով փոփոխութիւններ կը լինեն։ ասում են, որ իբր Կօրնօնինի կը նշանակվի ներքին զործերի մինիստր, Պլէնակ—Ֆինանսների մինիստր, Պրաժան—արդարութեան մինիստր. իսկ ժողովրդական լուսաւորութեան մինիստրի պաշտօնն, ինչպէս լսվում է, կը մնայ Շարէմայէրին։

Կ. ՊՕԼԻՍ, 6|18 յունվարի։ Զէրնոգորիան յայտնել է պետութիւններին, որ երկու միլիօն ֆրանկի զրաւականի փոխարէն, որը պէտք է հանէր նրան հողերը զիջանելու ուշացնելու պատճառով, նա սեփականացնում է իրան չէրնոգորցիներին յանձնված հողերի վրա բնակվող մահմետականների ստացուածները։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 յունվարի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է հետևեալը. Կանն, 4 յունվարի։ Կայսրուհին հազի պատճառով գիշերը աւելի անհանգիստ անցկացրեց, քրտինքը չափաւոր էր, ցերեկով իրան բաւականին լաւ էր զգում, բաւականացուցիչ կերպով կերաւ. Ջերմութեան աստիճանը երէկ երեկոյեան 38,2 և երակի զարկը 100 էր, իսկ այս առաւօտ Ջերմութեան աստիճանը 37,9 է, իսկ երակի զարկը 100։ Ստորագրեցին Աշչէվսկի և Բօտկին բժշկապետները։

ԿԱՆՆ, 5|17 յունվարի։ Կայսրուհու առողջութեան դրութիւնը խիստ փոփոխութիւնների չէ ենթարկվում, հիւանդութեան արտայայտութիւնները կանգնած են չափաւոր աստիճանի վրա, այժը չէ թուլանում։ Ջերմութեան աստիճանը այսօր առաւօտ 37,8 է, իսկ երակի զարկը 100։

ՎԻԵՆՆԱ, 7/19 յունվարի։ Լանգէնաու հրաժարեցրած է Ս. Պետերբուրգի դեսպանութեան պաշտօնից։ Ֆրանց Յոսէֆի շնորհեց նրան Ստեփանոսի առաջին կարգի շքանշանը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յունվարի։ Նիւ-Իորկում հռչակաւոր մարդասէր Ելիսաբեթ Տօմսօն դիֆտերիտի առաջն առնելու համար ուղիղ միջոց գտաւ, այդ միջոցը կոչվում է տինկտուրա զերանիում։ Այս տինկտուրան պէտք է փոքրիկ ունելի օգնութեամբ դնել դիֆտերիտական բծերի վրա։ Տօմսօն ասում է, որ այդ միջոցը բոլորովին առողջացուցիչ միջոց է, և խորհուրդ է տալի ռուսներին զրա զործադրութիւնը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 յունվարի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է հետևեալը. Կովկասեան փոխարքայի օգնական իշխան Սրվեատոպոլկ Միրսկի պետական խորհրդարանի անդամ է նշանակված. նա արձակված է զիներալ ադիւտանտի կոչումով Նորին Բարձրութեան օգնականութեան պաշտօնից, համաձայն նրա վատառողջութեան մասին յայտնած ցանկութեանը։

ԲԵՐԼԻՆ, 1/13 յունվարի։ Կայսրի քսան հինգամեայ թագաւորութեան օրուայ համար, Ֆրիդրիխ-Կարլ իշխանը Ս. Պետերբուրգ կը գայ։

ԿԱԼԿՈՒՏՏԱ, 8/20 յունվարի։ Արախարգանեան Թուրքէստանից ստացված լուրերին նայելով, Սալուր-Կանդէրի ազդեցութիւնն, ապստամբութեան պատճառով, զգալի կերպով թուլացել է։ Աբդուրահմանի մասին ոչինչ տեղեկութիւններ չը կան։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 յունվարի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է հետևեալը. Կանն, 9 յունվարի։ Կայսրուհին աւելի լաւ քնեց, շատ սակաւ հազաց, չը քրտնեց, բարեհաճեց ախորժակով ուտել, երեկոյեան դէմ իրան աւելի կազդուրված էր զգում. Ջերմութեան աստիճանը 38,4 է, իսկ երակի զարկը 116. ցերեկը Ջերմութեան սաստիճանը 38,4 էր, իսկ երակի զարկը 104։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 յունվարի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ աւստրիական դեսպան Լանգէնաու յունվարի 9-ին ներկայացաւ Կայսրին և յանձնեց Նրան իր հաւատարմագրերը։ «Слово» լրագիրը երրորդ նախազգուշութիւն ստացաւ և երեք ամսով արգելվեցաւ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 յունվարի։ «Русскій Инвалидъ» լրագիրը հաղորդում է, որ զգստանեան նահանգի առաջնորդ իշխան Մէլիքով նշանակված է կովկասեան բանակի զբաղխաւոր հրամանատարի օգնական, իսկ Ելիսավէտպոլի նահանգապետ իշխան Զավչավաձէ էլ նշանակված է զագէստանեան նահանգի առաջնորդ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

ՆԵՐԿԱՅ 1880 ԹՒՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ“

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում: Ստորագրվել կարելի է ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մշակի» խմբագրատանը Ց. ՄԵԼԻՔ-ՑԱԿՈՐԵԱՆԻՆ:

Կենտրոնական Գրավաճառանոցում Դվորցովայ փողոցի վրայ, Արծրունու Գալլերէյում վաճառվում են հետեւեալ նոր գրքերը:

1. Կարմիր լապտեր, փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի պատկերազարդ և կազմած. գ. — ր. 50 կ.
2. — Նոյնը առանց կազմի. — » 30 կ.
3. Թուամոզ մեզու՝ փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի. պատկերազարդ և կազմած. — » 40 կ.
4. Եղբայր և քոյր մանկական վէպ. Թարգ. Զ. Մսերեանի պատկերազարդ — » 30 կ.
5. Հսկայական ձեռքեր. մանկական վէպ, Թարգ. Զ. Մսերեանի, պատկերազարդ — » 10 կ.
6. Փարոս Հայաստանի. պատկերազարդ հանդէս ընտանեկան ընթերցանութեան համար. 1 — կ.
7. Թորոս աղբար Հայաստանի ճանապարհորդ. Գործ. Գ. Վ. Սրուանձտեանց 1 25 կ.
8. Երկունք իններորդ դարու. գործ Ծերենցի. 1 » — կ.
9. Պատմեկան ներշնչումներ, գործ. Հրանտ Ասատուրի. — » 60 կ.
10. Մի կաթիլ արտսր, զոր կը հեղու Սիրաք հայ մխիթրին վրայ — » 35 կ.
11. Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դատախօսութիւն Ս. Արծրունու. — » 50 կ.
12. Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, բժ. Ա. Բաբայեանի 1 » — կ.
13. Մարմնակազմական կամ անատոմիկական բառարան Լատիներէնից և Ռուսերէնից Հայերէն. բժ. Լ. Տիգրանեանցի 1 » — կ.
14. Կրօնք. հոգեբանական հետազօտութիւն Ս. Մանդինեանի 1 » — կ.
15. Հայկական Թատրոն. Վուշքի խմ վէչեր, փարս երեք պատկերով գործ. Մ. Տէր Գրիգորեանցի — » 40 կ.
16. Բեքեր բիձու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ, Թարգ. Ն. Լալայեանցի — » 25 կ.
17. Աշնանային երեկոյ գիւղում, վոդրվիլ մէկ արարուածով, փոխադրութիւն Գ. Շահբուդաղեանի — » 25 կ.
18. Բռնի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով, Թարգ. Գ. Զմշկեանի — » 40 կ.
19. Ժանօ և Ժանէտ օպերա-վոդրվիլ, Թարգ. Գ. Շահբուդաղեանցի մէկ գործողութեամբ — » 40 կ.
20. Պէպօ. կոմեդիա երեք արարվածով, գործ. Գ. Սունդուկեանի. — » 30 կ.
21. Պառաւներին խրատ. վոդրվիլ մէկ արարվածով Մ. Տէր Գրիգորեանի — » 50 կ.

Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասագրքեր Հայերէն, Ռուսերէն և օտար լեզուներին, դասական պիտոյքներ ուսումնարանների և աշակերտների համար, Հայերէն, Ռուսերէն և Գաղիերէն վիպասանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և գիտութեան զանազան ճիւղերին վերաբերեալ գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արագութեամբ: Օտարաքաղաքացիք իրանց պահանջները պէտք է ուղարկեն հետեւեալ հասցէով „Въ Тифлисъ. Въ центральную книжную торговлю“

5—6

Մի ՖՐԱՆՍՈՒՀԻ տալիս է թէօրետիկական և պրակտիկական ԴԱՍԵՐ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻՑ: Հասցէն. Կուկիա, Բէուտովսկայա փողոց № 21:

1—4

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ, որ այս տարի ԱԻԱՐՏԵԼ Է ՄՐՑԱՆԱԿՈՎ իգական ԳԻՄՆԱԶԻՈՆԸ, ցանկանում է ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒ պաշտօն ստանալ (գլխաւորապէս ռուսաց լեզուից և մաթեմաթիկայից) մի ՀԱՅ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ: Պայմանները խնդրում է ուղարկել ԱՅՍ ՀԱՍՑԷՈՎ՝ (С. Петербургъ. въ армянскую церковь, священнику Хонтардянцу).

Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ԿՈՎԿԱՍ. ԳՐԱՎԱՃ. ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝

1) Մամուլի տակ ընկաւ և 1880 թ. յունվարին լոյս կը տեսնի՝ ՂՈՒԿԱՍԵԱՆՑԻ — ընդհանուր պատմութեան հին դարը — ա. մս:
2) Շուտով մամուլի տակ կընկնի Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ աշխատասիրութեամբ և հրատարակութեամբ Մարդակազմութիւն՝ մարդուս մարմինը, նորա կեանքը և խնամատարութիւն-անունով պատկերազարդ գիրը:
3) Մամուլի տակից դուրս է եկել և արդէն վաճառվում է «ԾԵՐԵՆՑԻ-Երկունք 9-դ դարու» պատմական վէպը, որոյ գինն առժէն տեղ մի րուբլի է:

Նոյն տեղը ստացուել է Բոստոնի (պ. ՏԷՐ-ԱԲՐԱՄԵԱՆԻ) օրացոյցը, երկու պատկերներով զարդարուած. գինն է 15 կ.:

10—10

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

180 թ. Յունվարի 15-ից կ'հրատարակուի Երեւանում շաբաթը մէկ անգամ

«Պ Ս Ա Կ»

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

«Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ»

Տարեկան գինն է . . . 4 ռուբլի:
Կէս տարին . . . . 3 ռուբլի:

Ցանկացողները կարող են ստորագրվել ուղղակի խմբագրատանը, Դէօրգեան և ընկեր. տպարանումը: Կամ Աբգար Գուլամիրեանցի խանութումն: Խմբագրատունը բաց է առաւօտեան ժամի 10-ից մինչև ժամի 1-ն ճաշից յետոյ: Օտար քաղաքներից պէտք է դիմել ուղղակի խմբագրին հետեւեալ հասցէով Въ г. Эривань Редактору газеты „ПСАКЪ“ Васаку Пападжанову.

Խմբագիր-Հրատարակիչ՝ Դր. Վ. Պապաջանեանց.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

բոլոր եւրոպական լրագիրների համար Մոսկվայում (Центральная контора объявленій для всѣхъ европейскихъ газетъ въ Москвѣ, Большая Дмитровка, д. Бучумова) ԸՆԴՈՒՆՈՒՄ Է յայտարարութիւններ ԲՈԼՈՐ ռուս և արտասահմանեան ԼՐԱԳԻՐՆԵՐԻ համար խմբագրական ԳՆԵՐՈՎ, նշանաւոր ԶԻՋՈՒՄՆԵՐՈՎ:

Ռուսաց ամենօրեայ, շաբաթական, պատկերազարդ և ծաղրական լրագիրների ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ: ԱՄԵՆՕՐԵԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ունի բոլոր ռուսաց և արտասահմանեան ԼՐԱԳԻՐՆԵՐԻ հետ: Յայտարարութիւններ ընդունվում են նոյնպէս բոլոր գաւառական լրագիրների համար: Թարգմանութիւնները ՁՐԻ են լինում: Իւրաքանչիւր յայտարարութեան համար ԱՊԱՑՈՒՑԱԿԱՆ № է ուղարկվում:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՎԱՐՁ ԵՆ ԿԱԶՄՎՈՒՄ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ընդունվում է բոլոր լրագիրների համար:

15—15 (4)

ԾԱԽՎՈՒՄ Է

Նոր վրացական ձեռնարկ Самоучитель Учебникъ Грузинскаго языка. сост. г-мъ Теръ-Габріелянцемъ:

Այդ ձեռնարկը պարունակում է ընդհանուր տեղեկութիւններ ու քերականական կանոններ վրայ լեզուի ամենադիւրին ոճով. բառերի և տառերի արտասանութիւնը գրված է քանի մի լեզուով՝ ռուսերէն, հայերէն, ֆրանսերէն, գերմաներէն և պարսկերէն. այնպէս որ այդ միջոցով և օտարազգին ինչ՝ իրան կարող է հեշտութեամբ ուսանել վրաց լեզուն:

Արդէն երկրորդ հրատարակութիւնն է և յուսամք երրորդ տպագրութեամբ՝ ի լոյս ածել կարճ միջոցից յետ: Գինն է 50 կոպ. ծախվում է պ. Բերենշտամի, Զաքար Գրիգորեանի, Աւետիք Ենֆիաճեանի մօտ ու Գաբրիէլ Սալամբէգեանի խանութում:

Մեր աշխատութիւնք են նոյնպէս. 1) Ֆրանսիական լեզուի ձեռնարկ, վրաց լեզուի օգնութեամբ. Livre de poche à lusage de la jeunesse armènienne et georgienne; 2) Ինքնուսոյց ռուս լեզուի՝ վրաց լեզուի օգնութեամբ: Самоучитель Русскаго языка при помощи Грузинскаго.

Գաբրիէլ Տէր-Գաբրիէլեանց:

4—4

Ակադեմայում լաւ վկայականով աւարտած մի երիտասարդ հաշուապահութեան և արեւտրական թղթակցութեան դասեր է տալիս, նոյնպէս պատրաստում է երեխաներին բէալական դպրոցներում ստանալու բոլոր առարկաներից: պէտք է դիմել Զուբալովի քարվանսարան Դէորգեանի գրասենեակը:

1—3 (2)

ՄՈՒՇԵՂ ԲԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ԴԱՒՈՒԹԵԱՆԸ ցաւօք սրտի խնդրում է իւր սիրելի ծխականներին, յարգելի բարեկամներին և ծանօթներին, որոնք կ'կամենան պատւել իրան շնորհ բերել իւր առանձնայ յուղարկաւորութեան հանդիսին, որը կատարուելու է ամսոյս 17-ին հինգշաբթի օրը առաւօտեան ժամը 10-ին: Հանգուցելոյ դիակը Մողնոյ թաղում դանվող Քիշմիշեանի տանից կ'տարուի Մողնոյ Եկեղեցին և այնտեղից գնի Սուրբ պատարագին դէպի Խօջէվանից գերեզմանատունը:

1—2

Հրատարակվեցաւ Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ «ՎԷՊԵՐ» վերնագրով գրքոյկը: Ստանել կարելի է հեղինակից, դիմելով «Մշակի» խմբագրատունը:

1—5

«Մշակի» առանձին համարները 5 կոպէկով հատը ծախվում են ԹԻՖԼԻՍՈՒՄ հետեւեալ տեղերում. «Կարդանախի» մագազինում (Արծրունու տանը, Դվորցովի փողոցի վրա, պ. Նաբրեգովի մօտ), «Կովկաս» հիւրանոցի տակ (պ. Դէմիրեանցի ծխախոտի խանութում), Զաքարիա Գրիգորեանի գրավաճառանոցում (Միխայլեան կամուրջի մօտ) և դերձակ Դեկարխանեանի մօտ, Բէալական դպրոցի դիմացը:

ՄԻ ՖՐԱՆՍՈՒՀԻ

Որ նոր է եկել Թիֆլիս և ՀԻՄՆԱՒՈՐԱՊԷՍ գիտէ Ֆրանսերէն, Գերմաներէն և Անգլիերէն ցանկանում է ՏՆԱՅԻՆ ՎԱՐԺՈՒՀՈՒ կամ ԸՆԿԵՐՈՒՀՈՒ պաշտօն ստանալ: «ԿՈՎԿԱՍ» հիւրանոց, № 29 սենեակ. կարելի է ՏԵՍՆԵԼ երեկոյեան 2 մինչև 5 ժամը:

4—4

Дозволено Цензурою 15 Января 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона